



Հայաստանի կենսաբ. հանդես, 3(68), 2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՈՂՆԱԲՈՒԾԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՎԵՐԻ ՄՈՏ ՀԱՆԴԻՊՈՂ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԱՐՈՒՅԾՆԵՐԸ

Հ.Զ. ՆԱՂԱԾՅԱՆ, Ա.Ռ. ՀԱԿՈՔՅԱՆ, Լ.Յ. ԳՐԻԳՈՐՅԱՆ,
Վ.Լ. ՍԱՄՍՈՆՅԱՆ, Ս.Վ. ԵՐԻԵԵՎՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարան,
համաճարակաբանության և մակաբուծաբանության ամբիոն,
naghov@rambler.ru

2015-2016 թթ. ընթացքում Հայաստանի մանր թռչնաբուծարաններում հետազոտվել է հավերի արտաքին մակաբույծներով վարակվածությունը: Թռչնանոցներում և թռչունների վրա հայտնաբերվել են հետևյալ արտաքին մակաբույծները. *Dermanyssus gallinae* (կարմիր տիգ), ինվազիայի էքստենսիվությունը (ԻԷ) կազմում է 100%, *Argas persicus* (պարսկական տիգ), ԻԷ 100%, *Knemidocoptes mutans* (ոտքերի տիգ), ԻԷ 30% և *Menopon gallinae* (փետրակեր), ԻԷ 85%: Նշված արտաքին մակաբույծների լայն տարածվածությունը տնտեսություններում պայմանավորված է թռչնանոցների խիստ ցածր սանիտարական պայմաններով, թռչունների ազատ պահվածքով և բուժ-կանխարգելիչ միջոցառումների բացակայությամբ:

Ընտանի թռչուն – արտաքին մակաբույծներ – փետրակեր – տիգ

В течение 2015-2016 гг., птицы, содержащиеся в мелких птицеводческих хозяйствах Армении, были исследованы на предмет зараженности внешними паразитами. В птицеводческих хозяйствах, а также на внешних покровах птиц были обнаружены следующие паразиты: *Dermanyssus gallinae* (красный клещ) с 100 %-ной ЭИ, *Argas persicus* (персидский клещ) с 100 %-ной ЭИ, *Knemidocoptes mutans* (ножной клещ) с 30 %-ной ЭИ и *Menopon gallinae* (пухоед) с 85 %-ной ЭИ. Широкое распространение в хозяйствах вышеуказанных внешних паразитов обусловлено низким уровнем санитарного состояния птичников, свободным содержанием птицы и отсутствием лечебно – профилактических мероприятий.

Домашняя птица – внешние паразиты – пухоед – клещ

During the period of 2015-2016 the birds, kept in small poultry farms in Armenia, were examined for external parasites. In poultry farms, as well as on the skin and feathers of birds following parasites were found: *Dermanyssus gallinae* (red tick) with 100% of infestation, *Argas persicus* (Persian tick) with 100% of infestation, *Knemidocoptes mutans* (leg mite) with 30% of infestation and *Menopon gallinae* (lice) with 85% of infestation. Wide spreading of the above-mentioned external parasites in the country is due to low sanitary status of poultry houses, poultry free content and the lack of treatment - preventive measures.

Domestic bird – external parasites – lice – tick

Թռչունների արտաքին մակաբույծների կողմից հարուցվող հիվանդությունները վերջին տարիների ընթացքում մեծ տարածում են ստացել, ինչպես Հայաստանի հանրապետությունում, այնպես էլ արտասահմանում: Այդ հիվանդությունները առավել հաճախ

հանդիպում են գյուղական վայրերում, հատկապես թռչունների ազատ պահվածքի և հարմարեցված թռչնանոցներում պահելու դեպքում: Արտաքին մակաբույծներից առավել հաճախ թռչունների բոլոր սեռահասակային խմբերում հանդիպում են արգասային, գամագոիդային և սարկոպտոիդային տզեր, փետրակերներ, ոջիլներ և լվեր: Հայտնի է, որ նշված մակաբույծները սնվում են թռչունների արյամբ, առաջացնելով սակավարյունություն, իսկ դրանց թուլքը օժտված է տեղական գրգռիչ և ալերգիական հատկությամբ, որ բերում է թռչունների մոտ մշտական անհանգստության և փետրաթափության առաջացման և վերջապես նպաստում է դրանց մթերատվության նվազեցմանը, իսկ մատղաշների մոտ աճի և զարգացման դանդաղեցմանը [3-9]:

Այս մակաբույծները, բացի թռչունների մաշկի վրա անմիջական ազդեցությունից, պատճառ են նաև հանդիսանում վարակիչ և մակաբույծային հիվանդությունների տարածմանը:

Ելնելով վերոհիշյալից աշխատանքի նպատակն էր Հայաստանի մի քանի գյուղական համայնքներում և Երևան քաղաքի արվարձաններում բուծվող թռչունների մոտ հայտնաբերել և տարբերակել արտաքին մակաբույծներին ու գնահատել դրանցով վարակվածության էքստենսիվությունը և ինտենսիվությունը:

Նյութ և մեթոդ: Հետազոտությունները կատարվել են 2015-2016 թթ. Հայաստանի Հանրապետության՝ Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերի, ինչպես նաև Երևանի արվարձանների անհատական թռչնանոցներում, որտեղ թռչունները գտնվում էին ազատ պահվածքի պայմաններում: Ընդհանուր առմամբ հետազոտվել են՝ 45 անհատական թռչնանոցներ՝ յուրաքանչյուրում 50 թռչուն (ընդամենը 450):

Լաբորատոր հետազոտությունները կատարվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համաճարակաբանության և մակաբուծաբանության ամբիոնի լաբորատորիայում: Հավերի վրա մակաբուծվող արտաքին մակաբույծներին հավաքելու և տարբերակելու նպատակով յուրաքանչյուր անհատական թռչնանոցից ընտրողական կարգով վերցվել է 5 թև թռչուն: Հարկ է ընդգծել, որ անհատական թռչնանոցներում պահվում էին միջինը 10-20 թև տարբեր հասակային խմբերի պատկանող հավեր: Սովորաբար արտաքին մակաբույծները թռչունների մոտ մակաբուծվում են՝ գլխի, մեջքի, թևերի տակի, ազդրերի ներքին մակերեսի, կոյանքի շրջապատի և ոտքերի մաշկի վրա:

Հարուցիչներին առանձնացնելու նպատակով թռչունների մարմինը բաժանել ենք երկու հատվածի՝ մի հատվածը նախօրոք մշակել ենք մազնեզիումի սիլիկատով (հակաբորբոքային ցախափոշի Տալ), իսկ մյուսը՝ միջատատգասպան դեղանյութով՝ նեոստոմոզանի 1:1 հարաբերությամբ խառնուրդով, որը մակաբույծների մոտ առաջացնում է ժամանակավոր անշարժություն: Խոզանակի օգնությամբ մակաբույծներին հավաքել ենք սպիտակ թղթի վրա, ապա տեղափոխել՝ 70⁰ խտությամբ սպիրտով լցված փորձանոթի մեջ: Անջատված մակաբույծների քանակը բազմապատկել ենք երկուսով և ստացել ողջ մարմնի վրա հայտնաբերված արտաքին մակաբույծների քանակությունը:

Արգասային և գամագոիդային տզերին հավաքել ենք թռչնանոցների պատերի ճեղքերից, թառերի տակից, հատակի աղբից և այլն: Հետազոտությունները կատարվել են երեկոյան ժամերին, երբ թռչունները գտնվել են թռչնանոցում:

Արտաքին մակաբույծներին տարբերակել ենք խոշորացույցի օգնությամբ կամ մանրադիտակի փոքր խոշորացմամբ [1, 2]:

Արդյունքներ և քննարկում: Հավաքվել են 18600 մակաբույծ միջատներ և տզեր, որից 1000 կազմել է հավերի կարմիր տիզը (*Dermanyssus gallinae*), իսկ 17600 փետրակերները: Թռչնանոցի 1մ² տարածքի վրա հավաքվել է միջինը 150 կարմիր տիզ, իսկ մեկ թռչունից միջին հաշվով անջատվել է 78 հատ փետրակեր: Հետազոտված 450 հավերից՝ 382-ը վարակված էին փետրակերներով, հետևաբար ինվազիայի էքստենսիվությունը մանր թռչնաբուծարաններում կազմում էր 85%, իսկ ինտենսիվությունը (մեկ թռչնի մոտ փետրակերների քանակությունը) կազմում է 78 հատ փետրակեր:

Փետրակերների տարբերակման արդյունքում պարզվել է, որ Հայաստանի մանր թռչնանոցներում հիմնականում տարածված է Menoponidae ընտանիքին պատկանող *Menopon gallinae* տեսակի փետրակերը: Հետազոտությունների ընթացքում նաև պարզվել է, որ Հայաստանում հավերի հետ համեմատած՝ աթաղաղները ավելի հաճախ են վարակվում փետրակերներով:

Բացի թռչունների կարմիր տզից, հետազոտված բոլոր թռչնանոցներում և դրանց հարակից տարածքներում հայտնաբերվել է *Argas persicus* (պարսկական տիզ) արգասային տիզը, որոնց հարձակումները թռչունների վրա արտահայտվում են սակավարյունությամբ, ընկճվածությամբ, ընկնում է հավերի ձվատվությունը, իսկ մատղաշների մոտ՝ դանդաղում աճն ու զարգացումը:

Աղյուսակ 1. Հանրապետության թռչնաբուժական տնտեսություններում հայտնաբերված արտաքին մակաբույծների տեսակները

Մարզերը	N=50 Թռչունների մոտ առավել հաճախ հանդիպող արտաքին մակաբույծների տեսակները			
	<i>Dermanyssus gallinae</i> (կարմիր տիզ)	<i>Menopon gallinae</i> (փետրակեր)	<i>Knemidocoptes mutans</i> (ոտքերի տիզ)	<i>Argas persicus</i> (պարսկական տիզ)
Արարատ	+	43	17	+
Արմավիր	+	47	21	+
Կոտայք	+	46	14	+
Արագածոտն	+	41	5	+
Շիրակ	+	32	11	+
Լոռի	+	49	13	+
Տավուշ	+	43	32	+
Վայոց Ձոր	+	44	9	+
Երևան	+	37	15	+
Ընդամենը		382	137	

+* - վարակվածություն

Հայաստանի մարզերի մանր թռչնաբուժական տնտեսություններում մեր կողմից հայտնաբերվել է նաև *Knemidocoptes mutans*՝ ոտքերի տիզը: Վերոհիշյալ հարուցիչով թռչունների վարակվածության էքստենսիվությունը կազմել է 30%: Այս հիվանդությունը նույնպես ազդում է թռչունների մթերատվության, մատղաշների աճի ու զարգացման վրա [1, 2]:

Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ թռչունները միաժամանակ վարակված են եղել՝ ինչպես փետրակերներով, այնպես էլ *Knemidocoptes mutans* տզով, որը բացասաբար կարող է անդրադառնալ թռչունների առողջության, աճի ու զարգացման վրա:

Այսպիսով, հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ Հայաստանի մանր թռչնաբուժարաններում բուժվող թռչունների մոտ արտաքին մակաբույծներից հանդիպում են՝ *Dermanyssus gallinae* (կարմիր տիզ)՝ ԻԷ կազմում է 100%, *Argas persicus* (պարսկական տիզ)՝ ԻԷ 100%, *Knemidocoptes mutans* (ոտքերի տիզ)՝ ԻԷ 30% և *Menopon gallinae* (փետրակեր)՝ ԻԷ 85%: Նշված արտաքին մակաբույծների լայն տարածվածությունը պայմանավորված է թռչնանոցների խիստ ցածր սանիտարական պայմաններով, թռչունների ազատ պահվածքով և բուժ-կանխագելիչ միջոցառումների բացակայությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նաղաշյան Հ.Զ. Կենդանիների ինվազիոն հիվանդություններ, ՀԳԱՀ հրատարակչություն, Երևան, 248 էջ, 2006:
2. Акбаев М.И. Паразитология и инвазионные болезни животных. М., Колос, 743, 2000.
3. МУК 4.2.1479-03 “Энтомологические методы сбора эктопаразитов животных и птиц и определения насекомых и клещей – вредителей”, 21 с., 1982.
4. Calnek W.B., John H., Beard W.C., McDougald L.R., Saif Y.M. External parasites and, poultry pests. In: Diseases of poultry. 11th edition. Edited by Iowa State Press, Blackwell Publishing Company, Ames, Iowa, p. 905-930.

5. *Charlton B.R, Bermudez A.J, Boulianne M, Halverson D.A, Schrader J.S, Newman L.J, Sander J.E., Wakenell P.S.* Necropsy of the fowl. In, *Avian disease manual*. 6th edition. American Association of avian Pathologist. Athens, Georgia, 4, p. 232-233, 2006.
6. *Ikpeze O.O.* Preliminary survey of ectoparasites of chicken in Awika, South-Eastern Nigeria, *Animal Research International*, 5, 2, pp. 848-851, 2008.
7. *Sadiq N.A, Adejinmi J.O, Adedokun O.A, Fashanu S.O, Alimi A.A., Sofunmade Y.T.* Ectoparasites and haemoparasites of indigenous chicken (*Gallus domesticus*) in Ibadan and environs. *Tropical Veterinarian*, 21, 187-191, 2003.
8. *Sommer D., Heffels-Redmann U., Köhler K., Lierz M., Kaleta E.F.,* Role of the poultry red mite (*Dermanyssus gallinae*) in the transmission of avian influenza A virus. *Tierarztl Prax Ausg G Grosstiere Nutztiere*. Feb 16, 44, 1, pp.26-33, 2016.
9. *Wall R., Shearer D.* *Veterinary entomology*. 1st edition. Chapman and Hall, London., p. 43-95, 1997.

Ստացվել է 16.05.2016